Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 304 - Ա
որոշման

«ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ժամանակավոր տնակում բնակվող Գագիկ Երվանդի Գալստյանի բազմազավակ ընտանիքի (ունի չորս անչափահաս տղա) բնակարանային պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա)
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արարատի մարզի Մասիս համայնքի Ղուկասավան բնակավայր, բնակարանաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	17,600,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գագիկ Երվանդի Գալստյան (հասցեն՝ Արարատի մարզի Մասիս համայնքի Ղուկասավան բնակավայրի 16-րդ փողոցի 23 տնակ, նույնաքանացման քարտ՝ 002612323)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մայիսի 25-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) երկաթյա կառուցվածքներով հավաքովի բնակելի տան կառուցում՝ 15,200,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մայիսի 25-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը.

		2) արևային ֆոտովոլտային կայանի և ջրատաքացուցչի տեղադրում՝ 2,400,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) բնակելի տան հավաքովի երկաթյա կառուցվածքների ձեռքբերում՝ 3,800,000 դրամ ընդհանուր արժեքով, առանց ավելացված արժեքի հարկի. 2) շինարարական նյութերի և պարագաների ձեռքբերում՝ 7,500,000 դրամ ընդհանուր արժեքով, առանց ավելացված արժեքի հարկի. 3) շինարարական աշխատանքների իրականացում՝ 3,900,000 դրամ ընդհանուր արժեքով (հարկային արտոնություններ չեն ակնկալվում). 4) արևային ֆոտովոլտային կայանի և ջրատաքացուցչի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,400,000 դրամ ընդհանուր արժեքով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Արարատի մարզի Մասիսի համայնքապետարան
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ